

ՏԵՂԵԿԱՆՔ

**Լոռու մարզի արդյունաբերության ոլորտի 2013թ. 1-ին կիսամյակի (հունվար-հունիս) ամիսների
աշխատանքների մասին**

Ըստ վիճակագրական մարզային ծառայությունից վերցրված և մեր կողմից մշակված նախնական տվյալների 2013 թվականի առաջին կիսամյակում մարզի արդյունաբերական ձեռնարկությունները ընթացիկ (գործող) գներով թողարկել են 31,146.8 միլիոն դրամի արդյունաբերական արտադրանք 2012 թվականի 1-ին կիսամյակի 30,937.94 մլն դրամի դիմաց՝ աճի տեմպը կազմել է 100.7%, բացարձակ աճը՝ ընդամենը 208.86 մլն դրամ:

Այս տարվա հունիս ամսին 2012թ-ի հունիսի համեմատ մարզի արդյունաբերական արտադրանքի ծավալն նվազել է 15.2%-ով, իսկ 2013թ-ի մայիս ամսվա համեմատ ցուցանիշը նվազել է 11.2%-ով: Նվազման նման զգալի ցուցանիշների պատճառը թերևս համաշխարհային շուկայում պղնձի գների տատանումներն են:

2013թ. հունվար-հունիս ամիսների ցուցանիշներով մարզի արդյունաբերության հիմնական տեսակների ծավալները, աճերը և դրանց տեսակարար կշիռները ունեն այսպիսի տեսք՝

- **մշակող արդյունաբերություն** 24,671.26 մլն դրամ, ծավալի աճի ինդեքսը՝ 98.5% և տեսակարար կշիռը՝ 79.2%
- **հանքարդյունահանումը** համապատասխանաբար՝ 4,415.24 մլն դրամ, 100.2% և 14.2%,
- **էլ. էներգիայի արտադրությունը**՝ 2,060.30 մլն դրամ, 138.1% և 6.6%:

2013 թվականի 1-ին կիսամյակի արդյունքներով ևս հաստատվում է այն, որ մարզի արդյունաբերության, հատկապես մշակող արդյունաբերության ցուցանիշները մեծապես կախված են մետաղների համաշխարհային գներից: Մշակող արդյունաբերության աճի դադարը նաև կապված է մեքենաշինության-սարքաշինության ենթաճյուղի արտադրական ցուցանիշների շարունակական անկմամբ (մայիս ամսին անկումը 91.0%, հունիսին՝ 51.7%) ու քիմիական արդյունաբերության ենթաճյուղի աճի տեմպի նվազմամբ (հունվար-մայիսին աճի տեմպը 149.9%, հունվար-հունիսին՝ 126.1%): Արդյունքում մշակող արդյունաբերության տեսակարար կշիռը նախորդ տարվա 1-ին կիսամյակի նկատմամբ նվազել է մոտ 2%-ով:

Ի տարբերություն մշակող և հանքագործական արդյունաբերության ճյուղերի 2013թ. 1-ին կիսամյակում զգալի աճ է արձանագրվել էներգետիկայի ճյուղի ցուցանիշներում՝ 38.1%-ով աճել է ոչ միայն ճյուղի ձեռնարկությունների կողմից թողարկած արտադրանքի (էլեկտրաէներգիայի) ծավալը դրամային արտահայտությամբ, այլ նաև 24.7%-ով կամ 21.45 մլն կՎտ-ով աճել է էլեկտրաէներգիայի արտադրության ծավալը բնեղեն արտահայտությամբ: Անցած կիսամյակի արդյունքներով 16 էլեկտրակայան ավելացրել են էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները (մարզում գործում է 25 էլեկտրակայան, որից 24-ը ՀԵԿ-եր են):

2013թ. հունվար-հունիս ամիսներին մարզի մշակող արդյունաբերության մեջ ըստ ճյուղերի պատկերը հետևյալն է.

		(հազ. դրամ)			
	Ճյուղի անվանումը	2013թ. հունվար-հունիս	2012թ. հունվար-հունիս	աճը (%)	2013թ. հունվ-հունիս տես. կշիռը մշակող արդյունաբերության մեջ (%)
1.	Քիմիական արդյունաբերություն	516,140.0	409,406.0	126.1	2.1
2.	Թեթև արդյունաբերություն	433,888.0	452,907.0	95.8	1.8
3.	Սննդի արդյունաբերություն	1,582,984.0	1,174,181.0	134.8	6.4
4.	Մեքենաշինություն և սարքաշինություն	504,323.0	1,263,498.0	39.9	2.0

5.	Փայտամշակում և կահույքի արտադրութ.	23,967.0	19,759.0	121.3	0.1
6.	Մետալուրգիա	21,292,522.0	21,425,028.0	99.4	86.3
7.	Այլ ճյուղեր	317,431.0	295,629.0	107.4	1.3
Ընդամենը		24,671,255.0	25,040,408.0	98.5	100.0

Մշակող արդյունաբերության կառուցվածքում շարունակում է գերակշիռ դերակատարություն ունենալ մետալուրգիայի ենթաճյուղը: Ի տարբերություն 2012 թվականի, երբ արտադրության ծավալների էական աճ և որպես արդյունք տեսակարար կշռի զգալի աճ ապահովեց մեքենաշինության և սարքաշինության ճյուղը, այս տարվա 1-ին կիսամյակի արդյունքներով (2012թ. հունվար-հունիս ամիսների նկատմամբ արտադրության ծավալների ավելի քան 60% նվազում) ցույց են տալիս, որ մեքենաշինության և սարքաշինության ենթաճյուղի ձեռնարկությունների համար լուջ հիմնախնդիր է արտերկրում կայուն գործընկեր գտնելը, ինչպես նաև ցածր ինքնարժեքի հաստատումը: Նշենք, որ այս ենթաճյուղի ընկերությունների արտադրանքի գերակշիռ մասը արտահանվում է ԱՊՀ երկրներ:

Կայուն գործընկերների և սպառման շուկաների գտնելը արդեն ավելի քան 7 տարի է ինչ հիմնախնդիր է հանդիսանում մարզի թեթև արդյունաբերության ձեռնարկությունների համար: Ներկայումս ենթաճյուղի ձեռնարկություններից երեքն աշխատում են իրենց հզորությունների 7÷15%-ի սահմաններում: Բացառություն է հանդիսանում թերևս «Գլորիա կարի ֆաբրիկա» ՍՊ ընկերության գործունեությունը, որի ինտենսիվ մարքեթինգային քաղաքականության և ներդրումների արդյունքում ապահովվում է կայուն արտադրական գործընթաց: Արդեն երկրորդ ամիսն է, ինչ նվազում է ենթաճյուղի ձեռնարկությունների արտադրության ծավալը նախորդ 2012 թվականի համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ, մայիսին՝ 98.6%, հունիսին՝ 95.8%:

Մարզի առաջատար ենթաճյուղի՝ «Մետալուրգիա»-ի ցուցանիշներն 2013թ. հունվար-հունիս ամիսներին փոքր ինչ նվազել են: Այնուամենայնիվ «Էյ-Սի-Փի» ՓԲԸ-ն այս տարվա անցած 6 ամիսներին բնեղեն արտահայտությամբ արտադրել է 800.8 տոննա ավելի կոնվերտորային պղինձ, քան նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանում:

2013 թվականի հունվար-հունիսին ևս մարզի 8 ձեռնարկություններ այդպես էլ արտադրանք չեն թողարկել (հունվար-փետրվարին՝ 35, հունվար-մարտին՝ 13, հունվար-ապրիլին՝ 8 ձեռնարկություն): Դրանք հիմնականում այն ձեռնարկություններն են, որոնք դադարեցրել են իրենց գործունեությունը («Սլացք» ՓԲԸ, «Ամա-Խաչ» ՍՊԸ, «Վանուհի» ԲԲԸ) կամ աշխատանքը կապված է սեզոնային գործոնի հետ, մասնավորապես անտառտնտեսությունները:

2013թ. 1-ին կիսամյակի արդյունքներով մարզի արտադրանքի ընդհանուր ծավալում զգալի տեսակարար կշիռ ունեն Ալավերդու «Էյ-Սի-Փի» ՓԲԸ-ն՝ 68.36% (փետրվարին՝ 79.86%, մարտին՝ 75.43%, ապրիլին՝ 71.87%, մայիսին՝ 69.79%), «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ն՝ 8.01% (փետրվարին՝ 6.17%, մարտին՝ 6.87%, ապրիլին՝ 7.77%, մայիսին՝ 8.16%), «Սագամար» ՓԲԸ-ն՝ 5.80% (փետրվարին՝ 4.27%, մարտին՝ 4.66%, ապրիլին՝ 4.94%, մայիսին՝ 5.42%), «Ձորագետ-հիդրո» ՍՊԸ-ն՝ 3.15% (փետրվարին՝ 1.37%, մարտին՝ 1.78%, ապրիլին՝ 2.33%, մայիսին՝ 2.93%), «ԱՏ Գրեյն» ՍՊԸ-ն՝ 2.59% (փետրվարին՝ 0.63%, մարտին՝ 1.82%, ապրիլին՝ 2.36%, մայիսին՝ 2.41%): Շարունակվում է «Էյ-Սի-Փի» ՓԲԸ-ի տեսակարար կշռի նվազման և զուգահեռ այլ առաջատար ընկերությունների տեսակարար կշիռների աճի միտումը:

Ըստ տարածաշրջանների 2013 թվականի հունվար-հունիս ամիսներին թողարկված արտադրանքի ծավալն ընթացիկ (գործող) գներով ունի այսպիսի տեսք.

(հազ. դրամ)

Տարածաշրջանի անվանումը	2013թ. հունվար-հունիս	2012թ. հունվար-հունիս	Աճը		Տեսակարար կշիռը (%)
			Բացարձակ	(%)	
Սպիտակ	921,505.0	569,685.0	251,820.0	161.8	2.96
Տաշիր	391,801.0	305,797.0	86,004.0	128.1	1.26
Գուգարք	1,509,838.0	1,155,184.0	354,654.0	130.7	4.85

Ստեփանավան	2,155,860.0	2,325,954.0	-170,094.0	92.7	6.92
Թումանյան	24,042,585.0	23,957,814.0	84,771.0	100.4	77.19
Վանաձոր	2,125,207.0	2,623,506.0	-498,299.0	81.0	6.82
Ընդամենը	31,146,796.0	30,937,940.0	208,856.0	100.7	100.00

2013 թվականի 1-ին կիսամյակի արդյունքներով ևս արտադրության ծավալի նվազում են արձանագրվեց Ստեփանավանի՝ 7.3%-ով («Սագամար» ՓԲԸ-ի արտադրության ծավալների նվազում) և քաղաք Վանաձորի՝ 19.0%-ով (քաղաքի մեքենաշինության ու սարքաշինության 3 ընկերությունների արտադրության ծավալների անկում, քիմիական ձեռնարկությունների ծավալի աճի տեմպի նվազում) արդյունաբերական ձեռնարկությունները: Ընդ որում Վանաձորի արդյունաբերական ձեռնարկությունների արտադրության ծավալի նվազման տեմպը աճել է, որը մտահոգիչ հանգամանք է:

ՌԻՐախալի է, որ վերջին արդեն երրորդ ամիսն է՝ (15 ամսվա ընթացքում) հունիս ամսվա արդյունքներով ևս մարզի Տաշիրի տարածաշրջանի ձեռնարկություններն արտադրության 56.8% աճ են գրանցել (մայիս ամսվա արդյունքներով 210.5%), որը հատկապես պայմանավորված է ինչպես հայաստանյան ներքին շուկայում պանրի պահանջարկի, այնպես էլ ԱՊՀ երկրներ արտահանման աճով:

Ընթացիկ տարվա 1-ին կիսամյակում, չնայած արդյունաբերական արտադրանքի աճի դադարի, աճ է արձանագրվել արտահանման ցուցանիշներում՝ արտահանման ծավալն աճել է 1.9%-ով կամ 503.89 մլն դրամով: Այս տարվա սկզբից շարունակական կերպով նվազում է ԱՊՀ երկրներ արտահանման ծավալները՝ հունվար-հունիսին 19.0%-ով: Այլ երկրներ արդյունաբերական արտադրանքի արտահանման ծավալը չնայած փոքր չափերի, բայց կայուն աճ է արձանագրվում՝ 2.5%-ով:

2013 թվականի 1-ին կիսամյակում մարզի արդյունաբերության ոլորտում աշխատողների միջին ցուցակային թիվը կազմել է 4444 մարդ, որը 1.0%-ով կամ 27 մարդով պակաս է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից: Ընդ որում ըստ աշխատատեղերի ճյուղային բաշխման, զգալի նվազում է արձանագրված թեթև արդյունաբերության, մեքենաշինության-սարքաշինության և մետալուրգիայի ճյուղերում՝ համապատասխանաբար 206, 69 և 11 մարդով, իսկ նշված ճյուղերի ձեռնարկությունների մեծ մասը գործում են Վանաձորում: Արդյունքում տարածաշրջանային կտրվածքով արդյունաբերության ոլորտում նախորդ 2012 թվականի տարեվերջի նկատմամբ աշխատատեղերի զգալի անկում է արձանագրվել Վանաձոր քաղաքում՝ 261, Թումանյանի տ/շրջանում՝ 73 և Սպիտակի տ/շրջանում՝ 13 մարդով: Սա նույնպես մտահոգության տեղիք է տալիս:

2013 թվականի հունվար-հունիս ամիսներին արդյունաբերության ցուցանիշները բնեղեն արտահայտությամբ ըստ 22 հիմնական արտադրատեսակների հետևյալն են՝

	Արտադրանքի անվանումը	Չափի միավորը	2013թ. հունվար-հունիս	2012թ. հունվար-հունիս	Բացարձակ աճը
1.	Էլեկտրաէներգիա	մլն. կվտ.ժամ	116.3	92.4	23.9
2.	Էլեկտրաշարժիչներ	հատ	1152	2450	-1298
3.	Ավտոգենային սարքավորումներ	հազ. հատ	62.8	90.6	-27.8
4.	Տրակտորներ	հատ	0	103	-103
5.	Պղինձ՝ պղնձի խտանյութում	տոննա	918.7	835.8	82.9
6.	Ցինկի խտանյութ	տոննա	2279.0	1980.0	299.0
7.	Պղինձ կոնվերտորային	տոննա	5793.8	4993.0	800.8
8.	Պղնձի խտանյութ	տոննա	5930.6	5366.0	564.6
9.	Մինթետիկ կորունդ	կգ.	4319.7	4177.0	142.7
10	Լաքաներկանյութեր	տոննա	81.2	32.4	48.8
.					
11	Լվացող, մաքրող և օսլայող միջոցներ	տոննա	346.0	447.2	-101.2
.					

12	Շինափայտ	տոննա	40.6	153.7	-113.1
13	Պատանյութեր	տոննա	678.6	1337.0	-658.4
14	Ե/բետոնյան իրեր և կոնստրուկցիաներ	տոննա	4275.7	4024.0	251.7
15	Ոչ հանքային շինանյութեր	տոննա	21390.0	5347.0	16043.0
16	Այլումինե մետաղապլաստ դռներ, պատուհան.	հատ	245	148	97
17	Կուրտկաներ, տաբատներ, կոմբինիզոններ	հազ. հատ	52.7	70.2	-17.5
18	Պանիր	տոննա	162.0	169.9	-7.9
19	Հաց	տոննա	844.3	1011.8	-167.5
20	Կաթնամթերք (թթվաեր, կաթնաշոռ, մածուկ, թան)	տոննա	73.3	59.3	14.0
21	Հրուշակեղեն	տոննա	46.0	32.5	13.5
22	Մակարոնեղեն	տոննա	18.4	39.1	-20.7

Մարզի արդյունաբերական արտադրանքի բնեղեն արտահայտությամբ (22 հիմնական արտադրատեսակներ) ցուցանիշներից էլ է պարզ երևում, որ էներգետիկայի ու հանքարդյունաբերության դրական ցուցանիշների կողքին առկա է քիմիական արդյունաբերության, մեքենաշինության-սարքաշինության և հատկապես թեթև արդյունաբերության արտադրական ցուցանիշների կամ անկում կամ նվազման միտումներ:

2013թ. 1-ին կիսամյակում, ըստ նախնական պաշտանական տվյալների հիման վրա կատարված հաշվարկի, Լոռու մարզի պայմանական ՀՆԱ-ն կազմել է 76.19 մլրդ դրամ՝ 266.9 մլն դրամով պակաս է քան նախորդ տարվա համապատասխան հաշվարկային ցուցանիշը, կամ կազմել է 2012թ. 1-ին կիսամյակի նկատմամբ 99.65%: Ըստ մարզի տնտեսության իրական հատվածի հիմնական ոլորտների մարզի պայմանական ՀՆԱ-ի բաշխումը.

	2013թ. 1-ին կիս.	տեսակարար կշիռը %	2012թ. 1-ին կիս.	տեսակարար կշիռը %
Արդյունաբերություն	40.36	52.98	38.71	50.64
Գյուղատնտեսություն	14.21	18.66	15.00	19.62
Շինարարություն	4.49	5.90	4.54	5.94
Առևտուր	10.95	14.37	10.75	14.07
Ծառայություններ	6.17	8.09	7.44	9.73

Փաստորեն մարզի ՀՆԱ-ի աճ արձանագրվում է հիմնականում արդյունաբերության ոլորտում կամ ոլորտի հաշվին: Գյուղատնտեսության և շինարարության ոլորտների նման ցածր տեսակարար կշիռները պայմանավորված են սեզոնային առանձնահատկությամբ: